ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2025 թվական, N 172-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՆՈՂ ԳՅՈՒՂ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 63/2 ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-088-0961-0003 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21) ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) և 18) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 204.1-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48.1-րդ, 57-րդ, 60-րդ 76-80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14[1] կետով և 46.2 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի սեփականության իրավունքի N 11032025-06-0012 վկայականը (գաղտնաբառ՝ EU4V5W2ARTXD), «Գլոբալ սուրվեյ» դատական փորձաքննությունների ասոցիացիա ՍՊ ընկերության կողմից 19/09/2025թ տրված տարեկան շուկայական վարձավճարի գնահատման հաշվետվությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 1-ին փողոց, 63/2 հասցեում գտնվող, 06-088-0961-0003 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0.00232 հեկտար մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, մրցութային կարգով, տրամադրել 10 (տասը) տարի ժամկետով:
2. Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային չափը սահմանել՝ 50000 (հիսուն հազար) դրամ:
3. Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
   1) Հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:
   2) Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:
4. Համայնքի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով անցկացվող մրցույթը, որի մասին ընդունել համապատասխան իրավական ակտ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
5.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
6.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
7.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
8.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
9.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
10.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
11.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
12.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
13.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
14.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ., հոկտեմբերի 14,
Լոռու մարզ, ք. Ալավերդի